ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ք. Թումանյան 1-ի մաս, կենտ.փ շ.1, Հեռ. 098-04-80-46 ,

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N 03-191
23 դեկտեմբեր 2013թ.

Հարգելի պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 18-ի թիվ 48-Ն, 49-Ն, 50-Ա, 51-Ա և համայնքի ղեկավարի թիվ 48-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2013թվականի N 48-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածովի 18 կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով.

1,Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2014 թվականի համար տեղական
տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Անվավեր ճանաչել Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու <<Թումանյան համայնքի տարածքում 2014 թվականի համար տեղական տուրքեր և վճարներ հաստատելու մասին >2013թ. նոյեմբերի 8-ի թիվ 39-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 48-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բբ.501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բգ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բդ.3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

1000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դյուրքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ _____150000_դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝_____ 30000_դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ _____ 1000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ _____ 500 դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

8. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 500դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 500 դրամ:

11.Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50000 դրամ:

_____

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝_____ 1000 դրամ:

13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

14. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 500 դրամ:

15. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 500 դրամ:

16. Տեղական ինքնակառավարման մարիններ կողմից աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի համար՝ 100 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի 1 խմ աղբի համար 1000 դրամ կամ՝

բ.ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար 3000 դրամ:

17. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման ու փոխադրաման համար սահմանել սույն հավելվածի 16-րդ կետով նախատեսված հաշվարկելիք դրույքաչափերի20%-ի չափով:

18.Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:

19. Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

20.Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

Համայնքի ղեկավար՝ / Լ. Զավարյան /

18 դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2013թվականի N 49-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, « ՀՀ բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 32 հոդվածով.

1.Հաստատել Թումանյան համայնքի 2014թ. բյուջեն՝

1) Եկամուտների գծով՝ 30887.9 հազ. դրամ
2)Ծախսերի գծով՝ 30887.9 հազ.դրամ

2.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.
3.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝համաձայան հատված 2-ի.
4.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծաիսսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի.
5. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի.
6. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) հաշվին ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի.
7. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 6-ի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2013թվականի N 50-Ա

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ գույքահարկի մասին օրենքի 15 հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան քաղաքի բնակիչ, սոցիալապես անապահով Մարտուն Պետրոսյանին ազատել անհատական օգտագործման ավտոմեքենայի գույքահարկի վճարումից.

-հարկատուի գրանցման և գույքի գտնվելու վայրը՝ ք. Թումանյան

-ՀՎՀՀ 13587957

-արտոնության գումարի մեծությունը՝ 11800դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2013թվականի N 51-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 17-ի <<Թումանյան համայնքի 2013թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 43-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Արա Մկրտչյանի և Արտաշ Գալստյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն.

1)Մկրտչյան Արա - 25000 դրամ

2)Գալստյան Արտաշ - 25000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2013թվականի N 48-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ /ՄՈՒՏՔԱՅԻՆ/ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ /ԵԼՔԱՅԻՆ /ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 18-ի <<Թումանյան համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 49-Ն որոշումը.

1.Հաստատել համայնքի 2014թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:

2.Հաստատել համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 2, 4/:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ